



05/ՃՅԻԴ-18
1/05.1/1940-18

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 151 ա/վ

«ձձ» Օձ 2018 թ.

ք.Երևան

**ԳԱՐԵԳԻՆ ՌՈՔԵՐՏԻ ՆԱԴԻՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 16-րդ կետի 12-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 5-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2018 թվականի փետրվարի 16-ի 01/13/1/344-18 գրությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի (ծածկագիր՝ 21-2.1-3) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Գարեգին Ռոքերտի Նադիրյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:
2. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարին՝ աշխատավարձի վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:
3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:
Հիմք՝ Գ. Նադիրյանի դիմումը:

Դ. ՏՈՆՈՅԱՆ

OSign